

ՀՈՒՇԱՆԻԿ և ԱԶԱՐՅԱՆ

Քանասիրական գիտությունների դոկտոր

ՆԱՐԵԿԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ

18-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Գրիգոր Նարեկացու հանդեպ հայ ժողովրդի ունեցած դարերի պաշտամունքը Նարեկացիական շարժման մի յուրօրինակ կերպարանք է ստացում 18-րդ դարում: Ընդօրինակվում, միաժամանակ հատուկ հոգատարությամբ հրատարակվում և վերահրատարակվում են նրա անունով մեզ հասած երկերի մեծագույն մասը՝ «Մատեան ողորբգութեան» պոեմը, մի շարք ճառեր, ներբողյաններ, մեկնություններ, գանձեր: Տպագրվում են Նարեկացուց նվիրված գրույցներ, բանաստեղծություններ, երկերի մեկնությունները, լուծմունքները, գրվում են նորերը: Կատարվում է մի անցանկալի երևույթ. միայն «Մատեան ողորբգութեան» երկը 18-րդ դարում տպագրվում է ավելի քան տասն անգամ: Նարեկացու կյանքի և գրական ժառանգության ճանաչման ու գնահատման հարցում առանձնահատուկ սեր, նախանձախնայություն են հանդես բերում հայ կրոնա-ազգային լուսավորական, կրթական շարժման նվիրյալները՝ մատենագետներ, աստվածաբան-փիլիսոփաներ, բանասերներ, բանաստեղծներ, ուսուցիչներ, բժիշկներ, վաճառականական մտավորականության ներկայացուցիչներ, ժամանակի նշանավոր հրատարակիչներ, տպարանատերեր, սրբագրիչներ և այլք:

Հոգևոր գործիչ, մատենագետ-բանաստեղծ, սուրբանական բուհայինության դատավճռով գլխավորված Կոմիտաս Քեմալյանը ընտիր գրչությամբ ընդօրինակում է Նարեկացու վարքը, «Մատյանի» լուծմունքն ու բացատրությունը և այլ նյութեր: «Գիրքս է ձեռամբ գրեալ յերանկելոյն Կոմիտաս Քեմալյանեան քահանայ է և նախապես... Յամենայն ժամ փառք և գլխաբան և քեմալյան Քրիստոս,» ասվում է գործի Հիշատակարանում, որ ոչ թողեր անկատար մնալ հոգեւորք բուրաստանիս և յոգնածաղկեաց պարտիզիս, այլ հուր կարողութիւն ինձ մեղաւորիս, ըստ բարեխօսար կամաց իմաց հասանիլ ի վնար և ի յաւարտ»¹: Ժողովրդական ուսուցիչ, բանաստեղծ «Արդար վարժապետ մականուանեալ» Հովհաննես Կարնեցի, դարձյալ ընտիր գրչությամբ, համառոտում է «Մատեան ողորբգութեան» երկը և նրանից մի գեղեցիկ փունջ, Նարեկացու դիմապատկերով և այլ զարդանկարներով հանդերձ, հանձնում ընթերցողին: «Կարողութեամբն Աստուծոյ,» գրում է նա, աւարտեցաք այս ամենացանկալի գրքոյկս հոգեցոյց և լուսափայլ բանից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի, սակայն ո՛չ բոլորովին, այլ մասն ինչ: Իբրու մտեալ ի լուսափայլ ծաղկալի բուրաստանս, այսինքն ի հոգեկեցոյց մատեանս նորին և առեալ քանի մի ազնիւ, անուշահոտ, կենսաբայր ծաղիկ և վարդ գեղեցիկ՝ փոխադրեցաք աստ և գրեցաք

¹ Վենետիկ, Մխիթարեան Միաբանութեան Մատենադարան, ձեռ. քիվ 119, էջ 1ա:

սոյն տօմսակիս, ի խնդրոյ ազնիւ հղօր մերոյ վայելչանկատ մետաքսագործ տիրացու Յովհաննիսի, որ յոյժ փափագանօք եւ ըզձատոշոր սիրով գրել ես...»²:

Հնդկահայ գործիչ և բանաստեղծ Իգնատիոս Ջուղայեցիին իր տարագիր կյանքի ողջ ընթացքում, «իրքեւ վշտաց մխիթարութիւն», իր մոտ է պահում «Մատենան ողբերգութեան» մի ընտիր ձեռագիր և, 1763 թվականին գալով Վենետիկ, իր խնայած միջոցներով և Մխիթարյանների օգնությամբ տպագրում այն: «... Ես ջուղայեցի մահտեսի Տէր Իգնատիոս Ջաղատեանց տրուպ քահանայ, գրում է նա, որ բազում ժամանակս ի Հնդկիս կեցեալ եմ... սրբոյն Սաղիմայ շրջեսլ եւ ի սուրբ Աթոռն Հոռվմայ հասեալ եւ անտի ի Վենետիկ, յայս ամենայն վայրս պանդխտութեան զայս գիր կալայ ինձ վշտաց մխիթար եւ խթան հեղձացեալս անձին, այժմ ի փոխարէն բազմապատիկ երախտեաց ի բարերար Տեառնէ, առ իս հղելոց զամենայն ժամանակս պանդխտութեան իմոյ, յօժարեցայ զհոգնանուագ բանս ինչ աղօթից գրոյս տպագրեալ յօժարամիտ ծախիւք՝ նուէր ընծայել բարեպաշտութեան աղօթասէր հղբարցդ, ի հոգեւոր յիշատակ ինձ եւ իմոցս առհասարակ»³:

Իգնատիոս Ջուղայեցիին տպագրում է «Մատենան»-ը ոչ ամբողջությամբ, այլ, իրրեւ հմուտ նարեկագետ, գործնական ցկատառումներով ընտրում առավել ազդու և գեղեցկագույն հատվածները և մի ընտիր փունջ կազմում. «Ո՛չ զամենայն բովանդակ..., այլ քաղեալ ընտրանաւ զառաւել կարեւորսն եւ վլխակարգեալ լատ պատշանի շարաթու աւուրց, եւ ըստ պէս-պէս պիտոյից հայցուածոց, եւ որպէս թէ լընդարձակ բուրաստանէ՝ փունջս փունջս ծաղկանց հաւաքելոց առաջի ընծայեալ, զի ի պատրաստի ունիցին՝ որք փափաքինն վայելել յանուշահոտութիւն զուսրբութեան բանիցս»⁴:

Իգնատիոս Ջուղայեցիին իր թափառական կյանքի պատմությունը հանգամանորեն ներկայացնում է նաև «Մատենան»-ին կից՝ «Յիշատակարան ոտանաւոր չափով» բանաստեղծության մեջ: Այստեղ հեղինակը պատմական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Մխիթարյան Միաբանության մասին՝ մեծապես գնահատելով այն դերը, որ Միաբանությունը կատարում էր Հայոց գրական, կրթական շարժման և տպագրության մարզերում.

Վայելուչ վանք կայ արքայեան,
չորք անկիւնի եւ պատուական,
հղբարք ամեն ի սէր միաբան,
առաջնորդին հրապտակ կան:

Տէր Ստեփանէ Հայր հոգեւոր,
նոյնոյ վանիցն մեծաւոր,
հիփոյս պատիւ եցոյց՝ յուղով,
զխնդիր սրտիս կատարելով⁵:

² Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 8422, էջ 93ա:

³ Բանք աղօթից սրբոյն Գրիգորի նարեկայ վանից վանականի, Վենետիկ, 1763, էջ 4:

⁴ Անդ, էջ 4-5:

⁵ Անդ, էջ 309: Տե՛ս նաև Հ. Ա. Ղազիկեան, Հայկական մեր մատենագրութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, Ս. Ղազար, 1908-1912, էջ 485-488:

Իզնատիոս Զուղայեցին այստեղ էլ ջերմ տողեր է ձագնում Մխիթարյանցների ջանքերով տպագրված (1763) «Մատեան ողբերգութեան» պոեմի աճման հեղինակի հիշատակին: Տարագիր հայ բանաստեղծը ռտանավոր պարզ հանգի ու չափի մեջ, պատմողական հղանակով ներկայացնում է այն ընդհանուր սերը, որով համակված է եղել հայ մտավորականությունը «Մատեան ողբերգութեան» երկի նկատմամբ և այն մեծ պահանջը, որ եղել է ժողովրդի մեջ «Մատեանը» կրկին ու կրկին տպագրված տեսնելու համար:

Րարուն պայծառ և ցանկալի,
Տէր սուրբ Գրիգոր Նարեկացի,
Միշտ առ Աստուած հոգւով խօսի,
Բանք իւր ընտիր՝ հանուրց յայտնի,
Ցանկացայ ես կաթոզնելով,
Ձիւր սուրբ աղօթս տըպագրելով,
Բանգի կայի յայն կարօտով,
Բազմաց ի նոյն փափագելով:

Տարագիր հայ մտավորականը իր սրտի խոսքն է ասում Նարեկացու մասին, «Մատեանը» գնահատում իբրև մարդկանց «թմրած հոգիները» սթափեցնող, արիություն ներարկող մի ստեղծագործություն, որի կենսական ուժը զգացել է և ինքը իր ողջ իմացական կյանքում:

Զթմրեալ հոգիս առնէ զգաստ,
Որք մտանեն ի յայս դարաստ:
Ձի վատասիրտ եմ, չունիմ յոյժ,
Վասն այն յաւէտ յանախէ տոյժ...
... Մարդասէր Տէր, ինձ ողորմեա,
Աղայանօք սուրբ Նարեկայ⁷:

Նույն՝ 1763 թվականին «Մատեանը» ամբողջությամբ, լուծմունքի և բացատրության հետ միասին, տպագրվում է նաև Պոլսում՝ Ակնցի մատենասի ուղղի հացագործ Նրամի արդյամբ և ջանասիրությամբ: «Մատեանը», - գրում է հրատարակիչը, - քաղցր է քան զմեզու խորիսխ՝ կրից հաշակելեաց, ասործալի քան զսեղան յոգնախորտիկ՝ աչաց տեսանելեաց եւ յանախագին քան զակունս պատուականս հոգեւորական վաճառականաց: Հիշատակադիրը գնահատում է «Մատեան»-ի քարճը արվեստը, որ հույժ ուշագրավ է, ընդգծում է նրա հարակցության փաստը Աստվածաշնչի հետ: «Ձոր գեղեցիկ յօրինեալ մարգարտօրէն շարահիւսեաց երանելի վարդապետս... սուրբ գրոց վկայութեամբ, խորագոյն մտօք, ոլորեալ ոճով, քառակապ յօրինուածով եւ հոռոտրական պերճաբանութեամբ, իբրեւ մարգարիտ լուսափայլ եւ պատուական վերաբերեալ զսա յանյատակ ծովէ Աստուածաշունչ գրոց... որ զսիրտս մտառու վերածնողացն իւրոց ի տիպ կարողութեան՝ մամոյ փոխարկեալ, յաչաց անտի նոցին մաքուր արտասուս թորացուցանէ»:

⁶ Աճղ., էջ 309-310: Մատենադարանի թիվ 8793 ձեռագրում, էջ 185ա-186բ, Հարություն Տեր Սիմոնյանը: Իզնատիոս Զուղայեցու պոյն չափածո հիշատակարանը ոգտագործում է՝ հարմարեցնելով իր կենսագրությանը:

⁷ Գրիք աղօթից..., Պոլիս, 1763, էջ 638:

Ինչպես տեսնում ենք, մարեկագիտությունը թևածում է նաև հիշատակարանային գրականության մեջ. դա գալիս է հենց և 18-րդ դարում մի մոր որակ ստանում:

1763 թվականին Պոսում վերահրատարակվող «Մատենան»-ի վերջում Հակոբ Նալյանը գետեղում է նաև Նարեկացուն վերագրվող «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ...» երկը՝ ֆաղելով մի հին ձեռագրից. «Յաւելեալ ի սմա, գրում է հրատարակիչը.՝ զգիրք իմն փոքրիկ սոյն հեղինակիս, որ կոչի ըան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ Վարդանայ դիւանադարի յօրինեալ, որ ֆաղաֆիս մեծի աստուածաբան պատրիարհն շնորհելովն եղաւ ի վերջոյ»⁸:

Նալյանն իր վրա է վերցնում նաև քննարկ սրբագրության դժվարին գործը: «Ձեզ Նարեկեմիս, գրում է նա,՝ «Մանուցումն առ աստուածասէր եւ ընթերցասէր անձինսդ» խորագրով իր առաջարանում,՝ եւ զայս զանձս ծածկեալ եւ գաղբիւրս կենեալ կամելով ի լոյս ածել եւ իբր յոսկեղեն սափառոջ գաղեալս մանանայ ախորժափորձ կոկորդաց ձերոց ի զմայլումն տալ, այսինքն, գտեսրակս լի արդեամբք՝ արդիւնաւոր հրեշտակական վարդապետին եկեղեցւոյ՝ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, զոր ի խնդրոյ Վարդանայ դիւանադարին Անճեֆարիմայ Աթուրուհեաց արքայի՝ արքունական հրովարտական գծագրողին յարմարեալն էր՝ մեք ըստ խնդրոյ ումանց հոգեսէր քարեպաշտաց հրաման տալով տպեցման, զոր եւ սրբագրեալ ձեռք մերովք, ի լրումն քաղճանաց նոցա ըստամբայել թոյլ տուաք»⁹: Մի կողմ թողնելով երկի հեղինակային պատկանելության հարցը, նկատենք միայն, որ Նալյանը քարոյագետ-պատմագետի հայացքով է գնահատում այս երկը և արժանի հարգանք հատուցում ոչ միայն հեղինակին, այլ նաև մեկնասին՝ «քարեպաշտ իշխանապետ Վարդան դիւանադարին»: «Ուրեմն, գրում է Նալյանը,՝ այսու գրուկաւ ոչ միայն գովելի է սուրբն Գրիգոր Նարեկացին, ...այլ եւ գովելի է անձն խնդրողին, քարեպաշտ իշխանին Վարդանայ դիւանադարին, որ թողեալ գեոգս արքունեաց գործոց (ոչ ըստ մոլեկանաց՝ յԱստուծոյ զգանձս խնդրեաց ի լրումն անկատարից մեղաց), այլ ի պաշտօնէ է նորա գեոգեկեցոյց տեսրակս զայս աղերսեաց...»¹⁰:

«Մատենան»-ի այս հրատարակությունը ուշագրավ է նաև մի այլ կողմնակի պատմությամբ: Նրա մի օրինակը, որ այժմ պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի հնատիպ գրքերի 580 թվահամարի տակ, անձնապես պատկանել է 18-րդ դարի զինվորական նշանավոր բժիշկ «Ի գնդի զինուորաց» «Պետրոս Յովհաննէսի Քալանթարեանին» (ծն. 1735 թ. Ջուղայում): Նա «Մատենան»-ի վերջին ազատ թերթի վրա թողել է «Ազգաբնութիւն կարնառօտ վասն ցեղին իմոյ» սկսվածով հիշատակարան, որն օգտակար է նաև այս դարի հայ բժշկության, հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար: «Մատենան»-ի իր այս օրինակը, ահա, զինվորական բժիշկ Պետրոս Քալանթարյանը չեքմագին սիրով նվիրում է իր միակ դուստր Մարիամին: «Աստուծո պատուիրելով պատուիրեմ քեզ, սիրելի և գեղեցիկ դուստրդ իմ Մարիամ, գրում է հայրը աղջկան,՝ զի այս հրաշագործ եւ երկնապարգեւ սուրբ Նարեկ աղօթից գիրքս յազգաց յազգս, ի տանէ մերմէ մի՛ պակասեսցի, զի ահա

⁸ Աճղ, էջ 439:

⁹ Աճղ, էջ 440:

¹⁰ Աճղ, էջ 442:

գայս լիցի քեզ յիճէն աւանդութիւն, որ զսա ունիցիս պահել պատուով. որ եւ պարտի միշտ յաւիտեանս յաւիտենից մնալ ի յագգի մերում ի պահպանութիւն տանց եւ ի յաջողութիւն վայելողաց: Արդ. խնդրեմ ի ձեզ ո՛վ ընթերցողք, զի ի յընթերցումն ձեր գտոյն հրաշագործ սուրբ Նարեկս եւ ի օգտիւն ի սմանէ, յիշեալիք եւ զիս միով Հայր Մերիւ, որով եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ, ամէն: Որ եւ ամենախոնարհ ծառայ ճուստս քծիշկ Պետրոս՝ որդի Յովհաննիսէ Քալանթարեան Յուդայեցի, ի քիւն Փրկչին 1804. յամսեան Մայիսի 20, Մօսկով»¹¹:

Ողբ միջնադարում «Մատեան»-ի նկատմամբ ունեցած պաշտամունքը 18-րդ դարում այնքան է ուժեղանում, որ հրատարակիչները «Մատեան»-ը տպագրելու ժամանակ Նարեկացու դիմապատկերը «Կանոնական եւ փառագրական յօրինուած-ով», «բազում ջանասիրութեամբ» փորագրում են և անվճար քաժառուժ ժողովրդին: Ազգանվեր այս գործի նախաձեռնութեան պատիվը պատկանում է Պոլսի հռչակավոր տպարանատեր Աստվածատուր Կոստանդնուպոլսեցուն: Նրա մահից հետո այս գործը շարունակում են իր ծառագեցերը՝ որդին՝ Հովհաննես Դպիրը, և թոռները՝ Հակոբն ու Կարապետը: «Եւ արդ. գրում է Հովհաննես Դպիրը 1755 թվականին Պոլսում տպագրված «Մատեան»-ի եիշատակարանում, մտքեմ յիշել ընդ պատճառի տպեալ տուողաց գրոյս... եւ զհանգուցեալ հայրն իմ զԱստուածատուր յոգնաշխատ ծառայն ձեր, որ ի կենդանութեան պատուէր տուեալ իմումս յետնութեան թէ՛ ջանասէր միւս անգամ տպել գտուրք գիրքն Նարեկ՝ զգուշանալով յամենայն պարագայս նորին...: Յիշեալիք ընդ նմին եւ զիս՝ զանիմաստ որդի նորին լոկ անուամբ կոչեցեալ Յօհաննէս Դպիրս զձերն պաշտօնեայ ի մանկութենէ զտպագրող գրոյս, որ ծառայեալ եւ ծառայելոց եմ՝ որքան եւ իցեմ: Յիշեցի ընդ մեզ եւ թոռն նորին համբակահասակ որդի իմ Կարապետն՝ աւելածու ընդ եղբոր իւրում Յակոբայ դեռաբուսիկի, որ զաշխատանս դժուարին յանձն առեալ երկայն աւուրք է քազմաւ զգուշութեամբ՝ առ ի սէր և ի պատիւ սրբոյ վարդապետին՝ զպատկեր նորին, որ զսկզբան փորագրեաց, հանդերձ կանոնական եւ փառագրական յօրինուածովք, զոր վաճառեալ մատուցա՛մ ի ծառայութիւն ազգիդ առանց գնոյ (որպէս եւ հայր մեր՝ ծառայս ձեր, թէև այս անհանդ ոմանց թուիցի)»¹²: Այս պատկերով է քաջվում 1755 թ. Պոլսում տպագրված «Նարեկ»-ը եւ այլ հրատարակություններ՝ դրանից առաջ և հետո:

Սակայն «Մատեան ողբերգութեան» երկի 18-րդ դարի տպագիր և ձեռագիր օրինակների մեջ առանձնանում է Պոլսի 1726 թ. հրատարակությունը: Այդ հրատարակության նախաձեռնողներն են եղել Բաղեշի հռչակավոր դպրոցում մատենագիտական բարձր կրթություն ստացած հայկաբաններ՝ Պոլսի Պատրիարք Հովհաննես Բաղիշեցին (Կոլոտ) և Նրոսաղեմի Պատրիարք Գրիգոր Շիրվանցին (Շղթալակիր): Պաղտասար Դպիրն ահա, այս նշանավոր մատենագետների և այլ միաբանների ու աշակերտների մասնակցությամբ, իրականացնում է Նարեկացու «Մատեան»-ի և այլ երկերի վերտեղիչ տպագրությունը: Այս տպագրությունը նախորդի համեմատությամբ ներկայացվում է մի նոր ձևի մեջ: Հրատարակիչներին մտահոգում է «Մատեան»-ի քնագիրը ներկայացնել Աստվածաշնչային հղումներով: Սա ինքնին հույժ դժվարին և կարևոր քննադատական աշխատանք էր, որ սկսում են նրանք և ավարտում 1726 թ. դեկտեմբերին. «Ուստի որովհետեւ ըստ վկայութեան քազմաց սրբազանից գրոց հաւատի՛ կամ հղեւ մեզ

¹¹ Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանի թիվ 580 հնատիպ գրքի ձեռագիր եիշատակարանը:

¹² Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Պոլիս, 1755, էջ 572-574:

նուստ և անպիտան ծառայիցս Տեառն և սրբոց տնօրինականաց տեղեաց նորին և Ամլորդւոյն Կարապետին յիրոյ սրբոյ յետեալ սպասաւորացս, այսինքն՝ Գրիգորի եպիսկոպոսի և սրբոյն Սաղիմայ վերադիտողի՝ Յոհաննու վարդապետի և դիտողի Կոստոնդնուպօլսոյ, տպել և ի լոյս ածել զգեղեցկայարմար շարս աղօթից և արտասուաբեր բանից առն Աստուծոյ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, երիցս երանեալ սրբազան և աստուածաբան վարդապետի և ճգնասէր կրօնաւորի»¹³:

1726 թ. «Գիրք աղօթից» երկի Պոլսի այս տպագրութեան մասնակիցները միաժամանակ երկու նպատակ էին հետապնդում. առաջինը՝ բավարարել նարեկասեր ընթերցողին, քանզի նախորդ տպագրութեան վերջին օրինակները սպառված էին. «Գոյր քեպէտ սուրբ Մատեանն այս աղօթից տպեալ ի միջի մերում, սակայն վասն յոյժ պատուականութեանն» ոչ էր մնացեալ թէ որ գտանիցէր զնա»¹⁴: Երկրորդ՝ ինչպես նկատեցին, «Մատեան»-ը բաղդատել Աստվածաշնչի հետ: «Հուսկ յետոյ, քան զամենեսին, գրում է Պաղտասար Դպիրը այդ տպագրութեան իր հիշատակարանում. « և զիս սրբագրող սրբոյ Մատենիս, զմեղապարտ Պաղտասար չնչին Դպիրս, և զանձանձիր վարժապետն իմ՝ զՖահրապատցի Աղանի Աստուծատուր վարդապետն, և ծնողսն մեր յիշեսցի ի Տէր, յորմէ և դուք անմոռաց լիջիք ողորմութեամբ. ամէն»¹⁵: Այս հրատարակութեան Առաջաբանի և Հիշատակարանի հանգամանալից ուսումնասիրութիւնը հավաստում է, որ Պաղտասար Դպիրն այստեղ էլ է կիրառում 1719 թ. Պոլսում «Մաշտոց»-ի տպագրութեան իր սկզբունքները և, օգտվելով սրբագրիչի անսահմանափակ իրավունքներից, ընդլայնում իր բնագրագիտական, բանասիրական աշխատանքի չափերը: «Կարողութեամբն Աստուծոյ և ողորմութեամբ Նորին, կարդում ենք Հիշատակարանում, տպեալ սուրբ գիրս աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ և ճգնագգաց վարդապետի, ի բազում լաւ օրինակաց, բազմաշխատ երկամբ սրբագրութեան, զայլ և այլ օրինակսն ընդ միմեանս համեմատելով, որ և ի խնամոցն Աստուծոյ գտաք հին օրինակ մի, որ գեր ի վերոյ էր քան զայլսն, յորմէ բազում ինչ սխալանս և պակասութիւնս բառից և բանից ուղղեցաք շնորհիւն Աստուծոյ»¹⁶:

«Մատեան»-ի լուսանցային նշումները իրականացվում է շնորհիվ միաբանութեան աշակերտների՝ ջանքերով տիրացու Հարությունի, «որ էր հմուտ Աստուածաշունչ տառից» և «բազում երկունս կրեաց ի ժողովելն զվկայութիւնս... ընդ նմին և զփոքրիկ Աւետիք եղբայր նորին, զհոգեծին որդեակն մեր ի Տէր հանգուցեալ, որ և նա ի տղայական հասակին ընթեռնոյր Աստուածաշունչ տառս, մինչ գտանէր զբանս ումանս համեմատս բառից աղօթական գրոյս այսորիկ՝ ասէր խնդալով, անա վկայութիւն մի այլ գտի. իսկ մեք վասն շահելոյն զորդորդ միտ նորա, ոչ ձգեաք յետս թէ այդ չէ պիտոյ»: Աղբյուրների լուսանցային նմուշները, բնականաբար, կատարվում էին Հովհ. Բաղիշեցու, Գրիգոր Շիրվանցու հսկողությամբ, իսկ «նարեկացիագէտ, հայագէտ» Պաղտասար Դպիրը սրբագրում էր՝ բառիս բուն և ոչ զուտ սրբագրիչային իմաստով:

¹³ Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ... Պոլիս, 1726, էջ Բ (2):

¹⁴ Անդ, էջ Բ (2):

¹⁵ Անդ, էջ ՆԼԱ (431):

¹⁶ Անդ, էջ ՆԻԼ (427):

Նարեկացու «Գիրք աղոթից»-ի Պոլսի 1726 թ. տպագրության վերոհիշյալ գործիչներն ահա մեզ հայտնում են նաև, որ «Մատեան»-ը Աստվածաշնչի հետ բաղդատելու առաջին պատիվը պատկանում է Ոսկան Երևանցուն: Դա նրա բանասիրական մտանդացումների արգասիքն է, նրա գրչի առաջին փորձը: «...Ջի գրնարանս ոմանս յոյժ հարկաւորս, որք յիշեցեալք են ի սուրբ Մատեանս, կարդում ենք Պոլսի 1726 թ. տպագրության նախաբանում, գտեալ գորքանս դիզէ հանդէպ իւրաքանչիւր տողիցն համարովն հանդերձ ի լուսանցսն, որպէս լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետն սկսեալ էր ու չէր կատարեալ՝ յինչ եւ իցէ պատճառէ»¹⁷: Հայագիտության մեջ շարունակ ֆենարկվող այն հարցին, թե Նարեկացին ինչպես և որքան է ռզուվում Աստվածաշնչից, 250 տարի առաջ ստուգապես պատասխանում են հայագիտական մտքի վերոհիշյալ մշակները (ըստ Երևույթին ճարեկացիագետներին հայտնի չի եղել այս կարևոր փաստը): Ուշագրավ է նաև, որ «Նախըզարար առ ջերմեռանդ ընթերցող» խորագիրը կրող առաջաբանը ավարտվում է Պաղտասար Դպրի «Աղեքս առ սուրբ Հոգիս Աստուած» խորագրով բանաստեղծությամբ: Ազգային ֆեարեբգակը աղերսում է երկնային թագավորի օգնությանը՝ «Հառաչանքների մատեան»-ի տպագրությունը հաջող ավարտին հասցնելու համար:

Առ անփութիս Աստուածութիւն,
Հոգւոյդ սրբոյ հրգօրի,
Աղեքս անկեալ աղաղակեմք
Եւ անկանիմք առաջի:

Յօղեա՛ ի քոյ շնորհաց ցօղմոյ,
Ի մեր հոգիս մեղսավի,
Տալով մեզ յայս ներքսկգրան,
Այսմ երջանիկ մատենի:

Ջի կարասցուք առ հասանիլ
Յաւարտ սորին բերկրալի,
Յօգուտ եանուրց մերազնէից,
Մանկանց սրբոյն Սիօնի:

Որ է Մատեան հառաչանաց
Նարեկացւոյն Գրիգորի,
Աստուածաբան վարդապետի,
Եւ նգնասէր հըսկողի¹⁸:

Այսպես, ուրեմն, 18-րդ դարում, երբ ավելի քան տասն անգամ տպագրվում է Նարեկացու «Մատեան»-ը, Պոլսի 1726 թ. հրատարակությունը, Պաղտասար Դպրի սրբագրությամբ, առանձնանում է նաև իրրև Աստվածաշնչի հետ բաղդատության

¹⁷ Անդ, էջ Գ (3): Որքան հայտնի է, Ոսկան Երևանցու տպագրած «Մատեան»-ի առանձին օրինակներ պահպանվում են միայն վենետիկի Մխիթարյան Միաբանության գրադարանում: Այստեղ պահպանվում է նաև «Մատեան»-ի 1726 թ. տպագրության համար հիմք դարձած ձեռագիրը՝ թիվ 896: Ձեռագրում Պաղտասար Դպրի բանաստեղծության տեղն ազատ է:

¹⁸ Անդ, էջ Գ (3):

հնթարկված առաջին ամբողջական օրինակ: Նարեկացու «Մատենան»-ի այս հրատարակությունը նկատի են ունեցել և ռուսերեն թարգմանել 1755, 1763 և այլ թվականների տպագրության հեղինակները: Այսպես, օրինակ, 1755 թ. Պոլսի տպագրության «Մանուցում վկայութեանց» խորագրի տակ նշանավոր հրատարակիչ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու որդի Հովհաննես Դպիրը գրում է, որ զանազան պատճառներով՝ կրճատումներով են ներկայացվում նախորդ հրատարակության լուսանցային վկայությունները. «Նախ գի ումանց ասացուածոց բանից՝ որք էին անմիջապէս ի մոյնոյ բնարանէն, թարց անկանելոյ է մէջն այլ բնարան, համարութիւն միայն եղաւ. ոչ կրկնելոյ գնոյն...: Եւ ումանց, ուր միջոցն հեռագոյն էր, կամ անդրանցեալ ի միւս տուփն եղաւ...: Ումանց տեղեաց վկայութիւնքն երբեւին ոչ գոյ համաձայն պատասխանողքն նկարագրին...: Զի ուր միտմ բանի երկու եւ երեք վկայութիւն գոյին՝ մինն եղեալ ի երկուց զանց արարաւ...: Զբազմաց ևս ոչ արարաք փոյթ՝ սակս չբաւելոյ տեղոյն ի լուսանցան»¹⁹:

**

18-րդ դարում Նարեկացու երկերի ձեռագիր և տպագիր օրինակների ժողովրդականացման այս ընթացքի մեջ զարգանում է նաև նարեկացիագիտությունը: Ժողովրդի մեջ դարձնում մտած, ժողովրդից սիրված ու պաշտված «Մատենան ողբերգութեան» երկը ստանում է գիտական մոր ճանաչում: Նարեկացիագիտական մի յուրատեսակ շարժում է սկիզբ առնում, և այդ շարժման կենտրոններն են դառնում Վենետիկը, Պոլիսը, Էջմիածինը և մի շարք այլ վայրեր:

Դարի կրթական, լուսավորական շարժման նշանավոր գործիչներ Մխիթար Սեբաստացին, Գրիգոր Շիրվանցին, Հովհաննես Բաղիշեցին, Կոմիտաս Բեռ-մուրեյանը, Հակոբ Նալյանը, Պաղտատ Դպիրը, Պետրոս Նախիջևանցին, Իգնատիոս Զուղայեցին, Հովհաննես Կարենցին և այլք, յուրաքանչյուրը յուրովի են ներկայացնում Նարեկացու «Մատենան»-ը, նրա անձն ու վաստակը: Նրանք հավատալորի եռանդով շարունակում ու զարգացնում են Նարեկացու գրական ժառանգությամբ խանդավառված միջնադարի նշանավոր գործիչներ Վարդան Հայկազնի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գեորգ Սկևռացու, Հովհաննես Բանասերի, Գրիգոր Խլաթեցու և այլոց սկսած գործը՝ Հայոց նոր և ընդհանուր վերամորթվող գրական կյանքի բուռն պահանջներին համապատասխան:

¹⁹ Գիրք աղօթից..., Պոլիս, 1755 թ., էջ 575: